


ԱԳՐԱՐՍՅԻՆ ՔԱՂՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՍԵՐՁԵՅ ՍԵՆՔՈՒՄՅԱՆ

*ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի պրոֆեսոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր*

ՀՈՂԻ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԳՆԽԱԿՈՐ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա ժամանակաշրջանում, երբ աշխարհի բնակչության թիվն արդեն անցնում է 7 միլիարդից, և արագորեն աճում են նաև մարդկանց պահանջներն ու հետաքրքրությունները նյութական արտադրության բոլոր բնագավառների նկատմամբ, հույժ կարևոր խնդիր է դարձել բնական բոլոր տեսակի ռեսուրսների նպատակային, խնայողաբար, համալիր օգտագործումը:

Այս խնդիրն, անկասկած, արդիական է բոլոր երկրների համար, սակայն առաջնային է հատկապես տարածքային առումով փոքր երկրների դեպքում, որոնց տնտեսությունը շատ բնագավառներում կախված է ներմուծվող հումքատեսակներից և պատրաստի արտադրանքից: Այդպիսի երկրների շարքում է դառն Ճակատագրի բերումով 300 հազ. կմ² տարածքի 90%-ը կորցրած, այժմյան ընդամենը 30 հազ. կմ² տարածք ունեցող մեր հանրապետությունը: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ նշված տարածքի պատկառելի մասն էլ համատարած լերկ ժայռեր, բարձրադիր լեռնաշղթաներ են, ապա կարելի է պատկերացնել, թե որքան սահմանափակ են տնտեսական գործունեության տարածքային նպաստավոր հնարավորությունները:

Այնուհանդերձ, մենք բոլորովին էլ այն կարծիքին չենք, որ եթե դեռևս նավթ ու գազ չունենք, չենք կարող զարգացած տնտեսություն ունենալ: Մեր տարածքի բնակչության քանակի համեմատությամբ ունենք բնական այնքան պաշարներ (պղինձ, մոլիբդեն, բազմամետաղներ, ոսկի, եզակի քարանյութեր, նաև հողային ու շատ այլ), որ եթե դրանք օգտագործենք ժամանակակից գիտատեխնիկական նվաճումներին համապատասխան մեթոդներով, ապա կարող ենք ստեղծել Շվեյցարիայի, Լյուքսեմբուրգի ու Եվրոպական զարգացած այլ երկրների մակարդակի տնտեսություն:

Մեզ համար (ինչպես նաև մյուս բոլոր երկրների), անշուշտ, կենսական նշանակություն ունեն հողային ռեսուրսները: Հայաստանի Հանրապետությունը պատկանում է աշխարհի սակավահող երկրների շարքին: Ըստ որում, հանրապետությունը մեկ շնչին բաժին ընկնող մշակվող հողատարածքով աշխարհում վերջին տեղերում է՝ 0,22 հեկտար (միայն վարելահողերը՝ 0,18 հեկտար)¹: Նշենք, որ ԱՄՆ-ում մեկ շնչին բաժին ընկնող մշակվող հողատարածքները կազմում են 0,85, Կանադայում՝ 2,0, Արգենտինայում՝ 1,1, Չինաստանում՝ 0,15, Ճապոնիայում՝ 0,05 հեկտար²:

Փաստորեն, մենք, այս առումով, նկատելիորեն առաջ ենք Չինաստանից և Ճապոնիայից (որի ցուցանիշը աշխարհում վերջինն է): Սակայն շատ կարևոր է, թե եղած հողատարածքներն ինչպես են օգտագործվում: Չինաստանն ու Ճապոնիան աշխարհում հողատարածքների խիստ խնամքով օգտագործման փայլուն օրինակներ են, որոնց փորձը հեշտ կլինի ուսումնասիրել և կիրառել:

Վերջին տվյալներով մեր հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատարածքները 2100,9 հազ. հեկտար են, որից վարելահողերը՝ ընդամենը 448,5 հազ. հեկտար³:

Նախ նշենք, որ վերջին 12 տարիներին հանրապետության վարելահողերի տարածքները զգալիորեն կրճատվել են: Մասնավորապես, ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգրքի տվյալների, 1998 թ. դրանք կազմել է 494,3 հազ., իսկ 2010 թ.՝ 448,5 հազ. հեկտար⁴:

Այսպիսով՝ նշված կարճ ժամանակում վարելահողերի տարածքը կրճատվել է ավելի քան 46 հազ. հեկտարով, որը մեր հանրապետության համար նշանակալի ցուցանիշ է: Մտահոգիչն այն է, որ ավելի մեծ չափերով նվազել են հանրապետության ցանքատարածքները:

Եթե հանրապետության ցանքատարածքները 1995 թ. 351,9 հազ. հեկտար էին, ապա 2010 թ. դրանք կազմել են 283,4 հազ. հեկտար, այսինքն՝ կրճատվել են ավելի քան 68 հազ. հեկտարով: Այս ցուցանիշների համակարգում շատ մտահոգիչ է հատկապես հացահատիկային մշակաբույսերի ու խաղողի այգիների տարածքների նվազումը: Մասնավորապես՝ միայն 2006-2010 թթ. հացահատիկային մշակաբույսերի ցանքերը կրճատվել են ավելի քան 27 հազ. հեկտարով (թեև նշված ժամանակաշրջանում հացահատիկի համախառն բերքն ավելացել է 114 հազ. տոննայով)⁵:

Խաղողագործությունը թերևս, երկրի ամենաեկամտաբեր բնագավառներից մեկն է եղել դեռ հին ժամանակներից, որի շնորհիվ միջազգային տոնավաճառներում և ցուցահանդեսներում մեր արտադրած գինիներն ու կոնյակները միշտ արժանացել են ոսկե մեդալների ու դիպլոմների: Ի դեպ, նշենք, որ հայկական կոնյակն առաջին անգամ «Գրան պրի» մրցանակի է արժանացել 1901 թ. Փարիզում՝ շնորհիվ ռուս հայտնի գործարանատեր Շուստովի, ով այդ ժամանակներում Հայաստանում կազմակերպել էր գործարանային եղանակով գինու և կոնյակի արտադրություն:

Հաշվի առնելով խաղողի արտադրության բարձր արդյունավետությունը՝ մեր հանրապետությունում մինչև 1988 թ. խաղողի այգիների տարածքը հա-

¹ Տե՛ս **Ս.Մելքունյան**, Ընդհանուր տնտեսական աշխարհագրություն, Եր., 2012, էջ 79:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգրք, 2011, էջ 297:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 301:

սել էր ավելի քան 37 հազ. հեկտարի: Ցավոք, հետագա տարիներին գյուղատնտեսության այս ճյուղի նկատմամբ ոչ պատշաճ ուշադրության հետևանքով խաղողի այգիների տարածքները մեծապես կրճատվեցին. եթե 1978 թ. դրանք կազմում էին 37.1 հազ. հեկտար, ապա 2010 թ. տվյալներով՝ ընդամենը 17.4 հազ. հեկտար⁶:

Ինչպե՞ս է անդրադառնում բնական առավել կենսական նշանակություն ունեցող հողային ռեսուրսների օգտագործման նկատմամբ ոչ պատշաճ ուշադրության հանգամանքը մեր տնտեսության վրա առհասարակ:

Մինչև խորհրդային կարգերի փլուզումը հանրապետության գյուղատնտեսության համակարգում կային 804 կոլեկտիվ (կոլխոզային) և պետական (սովխոզային) տնտեսություններ: Գյուղական բնակավայրերի ամբողջ բնակչության միասնական ջանքերով, ինչպես նաև պետության մշտական աջակցությամբ (գիտական, տեխնիկական, տրանսպորտային, պարարտանյութերի, թունաքիմիկատների, ոռոգման ջրի բավարարման, ստացված բերքի մթերման, իրացման և այլ առումներով) ոչ միայն եղած վարելահողերն էին հիմնականում օգտագործվում, այլև զգալի մելիորատիվ աշխատանքներ էին կատարվում քարքարոտ, ճահճացած հողատարածքները յուրացնելու նպատակով:

Հողի սեփականաշնորհումից հետո (որը, մեր համոզմամբ, կատարվել է շատ հապճեպ, առանց նախապատրաստական լուրջ աշխատանքների) հանրապետությունում, արդեն 2003 թ. տվյալներով, ստեղծվել էր 337906 գյուղական տնտեսություն, այսինքն՝ կար հողի այդքան սեփականատեր, իսկ հողատեսքերի տարածքը 461.3 հազ. հեկտար էր⁷:

Այժմ հանրապետության գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն, միջին հաշվով, ունի շուրջ 1,3 հեկտար հողատեսք: Սակայն շատ կարևոր է պարզել, թե այդ հողատեսքը, որն ընդգրկում է վարելահողեր ու բազմամյա տնկարկներ, ինչպես է օգտագործվում:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բոլոր մարզերում էլ գյուղացիներն իրենց հատկացված հողատարածքները ամբողջությամբ չեն կարողանում օգտագործել, մշակել: Նույնիսկ Արարատյան դաշտում, որը գյուղատնտեսության հիմնական տարածաշրջանն է և տրանսպորտային, ոռոգման, մթերքի իրացման առումներով նպաստավոր դիրք ունի, շատ մոտ է Երևան քաղաքին՝ մթերքի խոշորագույն սպառողին, հողատարածքները նույնպես լրիվ չեն օգտագործվում:

Մոտավոր հաշվարկներով՝ հանրապետության սեփականաշնորհված հողատարածքների 40%-ից ավելին չի օգտագործվում: Իսկ մեր բնակլիմայական պայմաններն այնպիսին են, որ մշակվող, մելիորացված տարածքները 2-3 տարի անգործության մատնվելուց հետո նորից անապատանում են:

Իսկ ինչպե՞ս բացատրել, որ մեր սակավահող հանրապետությունում սեփականաշնորհված հողատարածքների պատկառելի մասը չի օգտագործվում, և գյուղատնտեսական բազմաթիվ արտադրատեսակներ (հացահատիկ, բանջարեղեն, մրգեր), որոնք մեզ մոտ լավ աճում են, ներմուծվում են հարևան և նույնիսկ հեռավոր երկրներից:

Պատճառները շատ են, նշենք դրանցից մի քանիսը.

1. Հողի սեփականաշնորհումը կատարվել է առանց նախապատրաստական աշխատանքների ու գիտական հիմնավորումների: Բոլոր մարզերում

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 308:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 301:

մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գյուղացիներին հողակտորներ են հատկացվել տարբեր հեռավորությունների վրա գտնվող վայրերից: Քանի որ շատ գյուղացիներ չունեն սեփական տրանսպորտային միջոցներ, հող մշակող, բերքը հավաքող գյուղատնտեսական մեքենաներ վարձելու հնարավորություններ, բնականաբար, չեն կարողանում իրենց հատկացված հողակտորներն օգտագործել:

2. Հաճախ հողատարածքների օգտագործմանը խոչընդոտում է ոռոգման, ջրառի ոչ կատարյալ համակարգը: Գյուղացուն հնարավորություն պետք է տալ անհրաժեշտ չափով ոռոգման ջուր օգտագործելու, որպեսզի բերքն աճեցնելուց, հավաքելուց, իրացնելուց հետո կարողանա վճարել դրա վարձը:

3. Գյուղացիների մեծ մասը հնարավորություն չունի աճեցրած գյուղմթերքներն իրացնել շուկայում, դրանից օգտվում են վերավաճառողները: Զարգացած երկրների օրինակով պետական աջակցություն է անհրաժեշտ արտադրված գյուղմթերքը տեղում իրացնելու համար:

4. Ոչ բոլոր գյուղացիներն են կարողանում ձեռք բերել պարարտանյութեր, թունաքիմիկատներ, բարձր բերքատվությամբ սերմեր, ուստի կատարված աշխատանքի դիմաց չի ստացվում այնքան եկամուտ, որ հողատարածքները նորից մշակելու շահագրգռվածություն առաջանա:

5. Խաղողագործն ամբողջ տարին չարչարանքով բարձր որակի խաղող է աճեցնում, որից արտադրվում են միջազգային շուկայում մրցանակների արժանացած գինու, կոնյակի տեսակներ, սակայն այդ նույն խաղողի 1 կգ-ի դիմաց վերամշակող ձեռնարկությունների տերերը գյուղացուն շատ ցածր գին են վճարում: Արդյոք դա չէ՞ պատճառներից մեկը, որ մեր երբեմնի խաղողի 37 հազար հեկտար այգիների տարածքն այժմ ընդամենը 17,4 հազար հեկտար է կազմում⁸:

6. Կարծում ենք՝ հրատապ է ինտենսիվորեն զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրների փորձի լայնորեն ներդրումը մեզանում, բացի դրանից, անհրաժեշտ է գյուղում կազմակերպել կոլեկտիվ, ֆերմերային տնտեսություններ, որպեսզի հնարավոր լինի ժամանակակից գիտատեխնիկական մեթոդների կիրառությունը մեր գյուղացիական տնտեսություններում:

Ինչպես նախկինում, այժմ էլ հանրապետությունում արտադրվող հացահատիկը չի բավարարում մեր պահանջները, և դրա մեծ քանակություն ներմուծվում է արտասահմանից՝ Կանադայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Ռուսաստանից և հեռավոր այլ երկրներից: Վերջին տվյալներով հացահատիկի և ալյուրի տարեկան ներմուծման ծավալը հասնում է 250-300 հազ. տոննայի, այն դեպքում, երբ մեր սակավահող երկրի 448,5 հազ. հեկտար վարելահողերի 165 հազ. հեկտարը, փաստորեն, չի օգտագործվում: Ի դեպ, չի գործադրվում նաև ավելի նպաստավոր բնական պայմաններ ունեցող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շուրջ 150 հազ. հեկտար վարելահողերի 98 հազարը:

Բազմիցս առիթ ենք ունեցել նշելու, որ գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողատարածքների մեծ մասը շարքից դուրս է գալիս լեռնահանքային արդյունաբերության թափոնների պատճառով: Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ միայն բնական քարանյութերի արդյունահանման հետևանքով հանքավայրերի թափոնների տակ (լքված հանքավայրերի հետ միասին) անգործածելի է դարձել 6,5-7,0 հազ. հեկտարը

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 308:

(հիմնականում սևահողեր)⁹: Մինչդեռ հայտնի է, որ բոլոր տեսակի հանքանյութերի արդյունահանումից հետո սպառված հանքավայրերի, դրանց շրջակայքի թափոններով զբաղեցված տարածքների ռեկուլտիվացումը և գյուղնախարարության տնօրինությանը հանձնումը պարտադիր պահանջ է, որը հիմնականում չի կատարվում:

Հայաստանի Հանրապետության ռելիեֆային բարդ կառուցվածքով ու կլիմայական բազմազանությամբ պայմանավորված՝ այստեղ առաջացել են գիտությանը հայտնի գրեթե բոլոր հողատեսակները՝ սկսած անապատայինից մինչև բարձրլեռնային «կմախքային» հողատեսքերը:

Ի դեպ, մեր տիպիկ լեռնային երկրի հողահանդակների ընդհանուր տարածքի միայն 25% են սևահողեր: Դրանք շատ նպաստավոր են հատկապես հացահատիկի արտադրության համար: Այսպիսի հողատարածքներով առավել հարուստ է Շիրակի մարզը, որը դեռ հնուց հայտնի է եղել որպես Հայաստանի հացի շտեմարան: Սակայն հենց այստեղ՝ Շիրակի դաշտում են գտնվում նաև մեր հանրապետության տուֆաքարի խոշորագույն հանքավայրերը: 1928 թվականից առ այսօր այստեղ՝ հատկապես Արթիկի տարածաշրջանում գործող տուֆի բազմաթիվ հանքավայրերում առաջացող հսկայական թափոնները և լքված հանքերը զբաղեցնում են ավելի քան հազար հեկտար սևահողային տարածք:

Կարծում ենք՝ Շիրակի, Լոռու դաշտերում, ինչպես նաև հանրապետության մյուս տարածաշրջաններում տուֆի, բազալտի, գրանիտի ու այլ քարանյութերի արդյունահանումից առաջացող հսկայական թափոնների տակ գտնվող և սպառված, լքված քարհանքերի զբաղեցրած սևահողային տարածքների ռեկուլտիվացումն ու որպես հողահանդակների օգտագործումը մեզ համար հրամայական պահանջ է:

Վերջին տվյալներով Հայաստանի Հանրապետությունում չօգտագործվող վարելահողերի տարածքն այնքան է, որքան այժմ գործածվում է հացահատիկի մշակման նպատակով՝ ստանալով մինչև 400 հազ. տոննա հացահատիկ: Այսինքն՝ եթե մեր վարելահողերի չմշակվող տարածքներն օգտագործվեն հիմնականում հացահատիկ արտադրելու համար, հանրապետությունում դրա արտադրությունը հնարավոր կլինի հասցնել առնվազն 700 հազ. տոննայի: Եթե մեր գյուղատնտեսական՝ հատկապես հացահատիկի արտադրությունը դնենք ինտենսիվ զարգացման ուղու վրա և մեկ հեկտարից բերքատվությունն այս ցուցանիշը շատ ավելի բարձր է), ապա կարող ենք մեր երկիրը հացահատիկ ներմուծողից դարձնել արտահանող:

Իսկ եթե Հայաստանի Հանրապետության հետ բազմակողմանիորեն միասնացած ԼՂՀ առավել բերքատու, բայց առայժմ չօգտագործվող վարելահողերը նույնպես մշակվեն, ապա, կարծում ենք, հայկական երկու հանրապետությունների գյուղատնտեսական մթերքի արտադրության հեռանկարային հիմնախնդիրները հնարավոր կլինի լուծել:

Համոզված ենք՝ մեր երկրի հողային ռեսուրսների առավելագույնս խնայողաբար, արդյունավետ մեթոդներով օգտագործումը կարող է դառնալ բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման, ինչպես նաև հատկապես գյուղական բնակչության արտահոսքի կրճատման երաշխիք:

⁹ Տե՛ս Ս.Մելքունյան, «Ը բնական պայմանների ու ռեսուրսների տնտեսական գնահատումը և շրջակա միջավայրի պահպանման հիմնախնդիրը, Եր., 2009, էջ 188:

СЕРГЕЙ МЕЛКУМЯН

*Профессор кафедры „Макроэкономики“ АГЭУ,
доктор географических наук*

Проблема эффективного использования земли как основного национального богатства.— Для нас, как и для всех других стран мира, несомненно насущное значение имеют земельные ресурсы. Однако наша весьма каменистая республика принадлежит к числу наиболее малоземельных стран мира.

При том, в нашей республике площадь обрабатываемых земельных участков на душу населения составляет 0,22 га (в том числе только пахотные земли - всего 0,18 га). Отметим, что по этому показателю мы в мире превосходим только Китай (0,15 гектар) и Японию (0,05 гектар). Однако по эффективности использования земельных ресурсов мы весьма отстаем не только от Китая и Японии, но и от многих других стран. Считаем, что весьма необходимо, по возможности, использовать опыт бережного и эффективного использования земельных ресурсов Китая и Японии в наших условиях.

В течении последних 15 лет посевная площадь нашей республики сократилась на более 68 тыс. гектаров, в том числе посевных площадей зерновых культур – на 27 тыс. гектаров, виноградники – на 20 тыс. гектаров. Значительная часть наших земельных ресурсов заняты под отходами предприятий горнорудной промышленности.

При весьма рациональном использовании наших земельных ресурсов, мы можем не только обеспечить потребность нашей республики по некоторым видам сельхозпродукции, но и экспортировать на мировой рынок.

SERGEY MELKUMYAN

*Professor at the Chair of „Macroeconomics“ at ASUE,
Doctor of Geographical Sciences*


The Problem of Efficient Use of Land as the Main National Wealth.— For us, as well as for all other countries in the world, land resources have undoubtedly essential value. However, our very stony republic belongs to the number of the most land-poor countries in the world.

Thus, in our republic the area of the farmland makes 0,22 hectares per capita (including arable lands - only 0,18 hectare). Let's note that by this characteristic we surpass only China (0,15 hectares) and Japan (0,05 hectares). However, by the efficient use of land resources we are far behind not only China and Japan, but also a lot of other countries. We consider that it is extremely necessary, whenever it is possible, to make use of

the experience of careful and effective use of land resources in China and Japan under our conditions.

Within the last 15 years the cultivated area of our republic was reduced by more than 68 thousand hectares, including cultivated areas of grain crops to 27 thousand hectares, vineyards – 20 thousand hectares. Considerable part of our land resources are occupied under wastes of the enterprises in the mining industry.

In case of very rational use of our land resources, we can not only provide the need of our republic in some agricultural products, but also export them to the world market.



ՎԱՐԴԻՄԻՐ ՄԱՆԱՍՅԱՆ
*ՀՊՏՀ բնօգտագործման ամբիոնի
ասիստենտ, աշխարհագրական
գիտությունների թեկնածու*

**ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ՀՀ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՄԵՋ ԴՐԱՆՑ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման գործընթացում առկա է բազմաբնույթ ռիսկերի առաջացման մեծ հավանականություն, որոնք կարող են զգալիորեն ազդել ներդրումների ներգրավման և նորաստեղծական զարգացումների արմատավորման վրա:

Ագրարային հատվածի տնտեսավարման շուկայական համակարգում ռիսկերի համալիր գնահատումը և կառավարման մեթոդաբանությունը համարվում են ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման անբաժանելի մասը: Ռիսկերը բնորոշ են ագրարային հատվածի յուրաքանչյուր ճյուղի ներդրումային ու նորաստեղծական զարգացման նախագծին, քանի որ այստեղ առկա են արտադրության կազմակերպման ուրույն գործոններ (հող, սեզոնայնություն, կենդանի օրգանիզմներ, աշխատանքային և արտադրության ժամանակաշրջանների անհամապատասխանություն և այլն), որոնք չեն կարող տալ անմիջական օգուտներ:

Ռիսկերի խնդիրը և դրանց տարատեսակությունը առանձնահատուկ տեղ են գրավում ագրարային տնտեսագիտության տեսության և այդ ոլորտում կատարվող գործնական բնույթի հետազոտություններում:

Ագրարային հատվածում մասնագիտացման բարձր մակարդակ ապահովելու համար հարկ է հաշվի առնել բազմաբնույթ ռիսկերի առաջացման պատճառները, նշանակությունը և կանխարգելման ու հաղթահարման մեխանիզմները:

Մակրոտնտեսական ռիսկերը մեծ մասամբ պայմանավորված են ագրարային հատվածի տարբեր ենթաձյուղերի ներդրումային գրավչության և հայրենական գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության նվազմամբ, ինչպես նաև համաշխարհային ագրոպարենային շուկայի և դրա մասնակազմությունների մրցակցությունից խիստ կախվածությամբ: Այսպես՝ ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված, ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը 2009-2010 թթ. հանգեցրեց նաև գյուղատնտեսական արտադրության եկամտաբերության անկման՝ առաջ բերելով ներդրումների զգալի կրճատում ագրարային հատվածի հիմնական կապիտալում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

*Ագրարային հատվածի զարգացման և գյուղատնտեսական մթերքի, հումքի ու պարենի շուկաների կարգավորման պետական ծրագրերի կատարման հիմնական ցուցանիշները ՀՀ-ում (2006-2010 թվականներին)**

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010
Գյուղատնտեսական ապրանքարտադրողների իրացման գների ինդեքսը (նախորդ տարվա նկատմամբ), %	111.9	103.4	99.2	87.8	132.0
Բուսաբուծական մթերքի իրացման գների ինդեքսը (նախորդ տարվա նկատմամբ), %	132.5	105.6	88.5	78.1	146.4
Անասնաբուծական մթերքի իրացման գների ինդեքսը (նախորդ տարվա նկատմամբ), %	101.0	101.7	109.6	97.2	123.5
Ագրարային հատվածի հիմնական կապիտալում ներդրումների ֆիզիկական ծավալի ինդեքսը, %					
Սպառողական ծախսերը մեկ գյուղացիական տնտեսության հաշվով (միջին ամսական), դր.	100918	100437	108866	104398	109115
Պարենամթերքի ձևավորման հաշվեկշռում հայրենական արտադրանքի տեսակարար կշիռը, %	93,6	94,2	86,7	85,8	89,7
հաց և հացամթերք	24,1	35,3	31,2	28,5	22,7
միս և մսամթերք	67,7	57,8	47,7	54,7	53,5
կաթ և կաթնամթերք (բացի կարագից)	91,1	89,8	87,7	83,7	79,4
Գյուղատնտեսական տեխնիկայի հիմնական տեսակների սարքինության մակարդակը, %					
տրակտորներ	78,8	79,0	78,7	79,1	78,4
հացահատիկահավաք կոմբայններ	85,4	85,9	84,8	83,1	81,0
կերահավաք կոմբայններ	74,8	75,8	73,3	78,2	74,9
Գյուղացիական տնտեսությունների էներգաապահովվածությունը 100 հա ցանքատարածության հաշվով, ձիաուժ	145.0	174.5	155.0	106.5	227.0
Բոլոր կատեգորիայի տնտեսություններում աշխատանքի արտադրողականության ինդեքսը, %	110,9	107,8	108,6	109,4	110,2

* Աղյուսակը կազմել ենք ՀՀ ԱԿԾ գյուղատնտեսության բաժնի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության և գյուղի սոցիալական զարգացման ծրագրավորման բուսաբուծության, անասնաբուծության ու անասնաբուծության վարչությունների, հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության և գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության տվյալների հիման վրա:

2009-2010 թթ. ագրարային հատվածում ներդրումները կրճատվեցին ավելի արագ տեմպերով, քան ամբողջ տնտեսության մեջ: Վերջին տարիներին այս բնագավառի զարգացման և գյուղատնտեսական մթերքի, հումքի ու պարենի շուկաների կարգավորման պետական ծրագրերի իրագործման ընթացքում ճյուղը թերֆինանսավորվել է գրեթե 2.2 մլրդ դրամով,¹ որը բացասաբար անդրադարձավ մեքենատրակտորային շարժակազմի սարքինության մակարդակի և կայուն զարգացման համար անհրաժեշտ արտադրական ներուժի ամրապնդման վրա:

Միաժամանակ, այս հատվածի տնտեսական վիճակը կարող է վատթարանալ նաև նյութատեխնիկական, այդ թվում՝ էներգետիկական ռեսուրսների շարունակվող թանկացման պատճառով: Օրինակ՝ 2006-ի համեմատությամբ 2011 թ. գյուղատնտեսական ապրանքարտադրողների կողմից բոլոր ուղիներով իրացված գյուղմթերքների միջին գներն աճել են 4.5-5.5%-ով, իսկ էլեկտրաէներգիայինը՝ 16.7%-ով, դիզվառելիքինը՝ 33.7%-ով, թունաքիմիկատներինը՝ 6.2%-ով²: Էներգառեսուրսների շուկաների առաջիկա ազատականացումը միայն կմեծացնի գների անհավասարակշռությունը գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքների միջև:

2009 թ. համեմատությամբ 2010 թ. ագրարային հատվածի ճյուղերի զուտ եկամուտը՝ համադրելի գներով, պակասել էր 96957.5 մլն դրամով և կազմել 273698.0 մլն դրամ, իսկ շահութաբերության մակարդակը՝ 8.3%՝ 2008 թվականի 14.6%-ի դիմաց: Այս հատվածի ցածր եկամտաբերությունը դարձավ գյուղացիական տնտեսությունների զգալի մասի վարկեր չստանալու հիմնական պատճառներից մեկը: Այդպիսի տնտեսությունների միայն քառորդ մասն ուներ կարճաժամկետ վարկերի օգտագործման հնարավորություն, իսկ ներդրումայինի՝ մոտ 30%-ը:

«Ա պետական ծրագրերի ստիպողական վերակողմնորոշումը, գյուղացիական տնտեսությունների՝ առևտրային բանկերից ստացած վարկերի տոկոսադրույքների լրահատկացումը ինչ-որ չափով նպաստեցին տվյալ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների արդյունավետության բարձրացմանը: Այսպես՝ 2011 թ. Կառավարության տրամադրած միջոցներով վարկերի՝ 2 փուլով լրահատկացման գործընթացն արդյունավետ էր, քանի որ 837 գյուղական համայնքների ավելի քան 25 հազ. գյուղացիական տնտեսությունների տրամադրվեց 17.4 մլրդ դրամի վարկ: Պետությունը սուբսիդավորում էր վարկային տոկոսադրույքի 4%-ը, իսկ լեռնային գոտու և սահմանամերձ տարածաշրջանների 179 առավել կարիքավոր գյուղական համայնքներում՝ 6%-ը³:

Հանրապետության գյուղացիական տնտեսությունների գերակշիռ մասը, հատկապես լեռնային գոտում և սահմանամերձ տարածաշրջաններում, առանց լրահատկացման, կաշխատեր վնասով, ընդ որում, որոշ մարզերում ու տարածաշրջաններում վնասաբերության միջին մակարդակը կարող էր կազմել 20-25%: Ոչ մի մարզում ու տարածաշրջանում, առանց լրահատկաց-

¹ Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ֆինանսական տնտեսագիտական վարչության տվյալների:

² Տե՛ս Պարենային ապահովություն և աղքատություն, 2010 թ. հունվար-դեկտեմբեր, Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Եր., 2011, էջ 33-35: Պարենային ապահովություն և աղքատություն, 2011 թ. հունվար-դեկտեմբեր, Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Եր., 2012, էջ 30-35:

³ Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրավորման վարչության տվյալների:

ման, շահութաբերության մակարդակը չէր կարող գերազանցել 5-7%-ի սահմանը, իսկ ամբողջ գյուղատնտեսական արտադրության շահութաբերության մակարդակը կլիներ -7.5-ից -8.0%:

Միջճյուղային տնտեսական հարաբերությունների զգալի ձևափոխումը, գների չընդհատվող անզուգադրելիությունը, ագրարային հատվածի առանձին ենթաճյուղերի ապախոշորացումը և գյուղատնտեսական արտադրության ցածր ու անկայուն եկամտաբերությունը խոչընդոտում են մասնագիտացման խորացման ու ընդլայնված վերարտադրության ուղով զարգացմանը: Այսպես՝ 2010-ին միայն արդյունաբերական վերամշակման հետևանքով ագրարային հատվածում ստացված գյուղատնտեսական հումքից որպես նվազագույն «դուրս է բերվել» մոտ 70 մլրդ դրամ (այդ թվում՝ պտուղբանջարեղենի հումքի վերամշակումից՝ 2.1 մլրդ, խաղողից՝ 16.8 մլրդ դրամ և կաթից՝ 40.0 մլրդ դրամ)⁴: Փաստորեն, գյուղացիական տնտեսությունները չեն կարող ձեռք բերել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ ու ամբողջությամբ փոխհատուցել հարկերի ու պարտադիր վճարումների գծով ռեսուրսներ մատակարարողներին, ինչպես նաև ապահովագրել գյուղատնտեսական մշակաբույսերը, կենդանիները և գույքը:

Ագրոպարենային շուկայի և պարենամթերքի մասնակազմությունների կարգավորման համար ֆինանսական միջոցների պակասը բարդացնում է իրավիճակը: Պետական ծրագրով այդ նպատակով նախատեսված էր հատկացնել ամբողջ բյուջետային միջոցների 1%-ը: Թեև 2010-2011 թթ. փաստացից ավելի շատ է ծախսվել՝ մոտ 5%, այնուամենայնիվ դա ևս անբավարար է ագրոպարենային շուկայի արդյունավետ գործելու համար:

Ագրոպարենային համակարգի և հատկապես դրա առանցքային ոլորտի՝ ագրարային հատվածի տնտեսության զարգացման կայունությունը ու մասնագիտացման հետագա խորացումը պահանջում են պետական կարգավորման համալիր միջոցառումների իրականացում՝ հաղթահարելու համար.

- սննդամթերքի նկատմամբ (հատկապես կենդանական ծագման) բնակչության վճարունակ պահանջարկի ցածր մակարդակը,
- ներքին ագրոպարենային շուկայի և դրա պարենամթերքի մասնակազմությունների ենթակառուցվածքների անբավարար զարգացած վիճակը,
- գյուղատնտեսական մթերքի, հումքի ու պարենի և նյութատեխնիկական ռեսուրսների շուկաներում ձևավորված գնային անհամարժեքությունը,
- գյուղատնտեսական մթերքի, հումքի և պարենի արտադրության մասնագիտացման գործում անբավարար նորաստեղծական զարգացումը և ներդրումային ակտիվությունը,
- քաղաքային ու գյուղական և ցածրադիր ու լեռնային գոտիների բնակչության կենսամակարդակների զգալի տարբերությունները,
- տնտեսապես զարգացած երկրներում գյուղատնտեսական մթերքի արտադրության մասնագիտացման գործում պետական աջակցության տարբեր միջոցառումների հաշվին ձևավորվող արտասահմանյան արտադրանքի արհեստական մրցակցային առավելությունները:

Հայրենական ագրարային հատվածի ֆինանսական աջակցության անբավարարությունը և անկայունությունը կարող են հանգեցնել ներդրումային

⁴ Տե՛ս Հ. Սարգսյան, Խ. Հարությունյան, Վ. Մանասյան, Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջ 22:

ու նորաստեղծական զարգացման հնարավորությունների հետագա կրճատմանը և նույնիսկ լճացման գործընթացների զարգացմանը:

Ագրարային հատվածի մասնագիտացման մակարդակը պայմանավորող կարևոր գործոններից մեկը ՀՀ բնակչության իրական եկամուտների աճն է հատկապես ամենացածր՝ խոցելի խմբերում: Շատ բան կախված է նաև շուկայական բարեփոխումների սկզբնական փուլում ընտրված ոչ ճիշտ ագրարային քաղաքականության հետևանքների հաղթահարումից, որը հանգեցրեց հանրապետության համար մինչև վտանգավոր սահմաններ պարենամթերքի ներմուծման ավելացման: Ուստի պետք է ընդգծել, որ տնտեսավարման շուկայական համակարգում պարենային անվտանգության ապահովումը ոչ միայն և ոչ այնքան ագրարային, որքան պետության կայուն մակրոտնտեսական զարգացման, սոցիալական կողմնորոշում ունեցող քաղաքականության իրականացման հնարավորությունների, բնակչության կենսամակարդակի անշեղ բարձրացման և գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատանքի միջազգային ու միջտարածաշրջանային բաժանման համեմատական առավելությունների օգտագործման հետ անմիջականորեն կապված համալիր հիմնախնդիր է:

Միաժամանակ, ՀՀ-ի՝ որպես պարենամթերքի հիմնական տեսակներ ներմուծող և փոքր ծավալներով կոնյակ, գինիներ, հանքային ջրեր, մրգեր (ներառյալ՝ ընկուզապտուղներ) և պանիր արտահանող երկրի համար, պարենային անվտանգության ապահովման հիմք են համարվում հայրենական ագրոպարենային համակարգի և դրա առանցքային ոլորտի՝ ագրարային հատվածի գործառնության արդյունավետության հետագա բարձրացումը և կատարելագործումը:

Այդ տեսակետից կարևոր է նաև պարենամթերքով ազգաբնակչության հուսալի մատակարարման ավելի կատարյալ կազմակերպատնտեսական մեխանիզմների օգտագործումը: Պատահական չէ, որ այս հիմնախնդրին անդրադարձել է ՀՀ Կառավարությունը 2010 թ. N1476 «ՀՀ գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը» և ՀՀ ԱԱԽ-ի կողմից 2011 թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության հայեցակարգը» հայտնի որոշումներով, որոնցում պարենային անվտանգության վերլուծության, գնահատման և կանխատեսման վերաբերյալ շատ հետաքրքրական մտքեր կան⁵:

Բնական ռիսկերը ՀՀ-ի համար ավանդականորեն եղել և մնում են մշտապես գործող բացասական գործոններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և գոտիական մասնագիտացման խորացման դեպքում: Ըստ մասնագետների գնահատման՝ բարձր ուժգնությամբ երկրաշարժերի ենթակա է ՀՀ տարածքն ամբողջությամբ. գյուղատնտեսական հողատեսքերի շուրջ 50%-ը՝ հողատարման, 20%-ը՝ գերխոնավացման, սելավների ու ջրհեղեղների, 17%-ը՝ կարկտահարման, 3%-ը՝ սողանքների (ավելի քան 2500 սողանք, որից 300-ը՝ բնակեցված տարածքներում), 0.5-ը՝ փլուզումների⁶:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 30/799/, 1 դեկտեմբերի 2010 թ., էջ 68-117:

⁶ Տե՛ս **Ա. Փաշինյան**, Ռիսկերի կառավարումը և ապահովագրական համակարգի ներդրումը ՀՀ գյուղատնտեսությունում, Սեղմագիր տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, Եր., 2009, էջ 3:

Այսպես՝ 2010 թ. ՀՀ մարզերի մեծ մասում երաշտը պատճառ դարձավ մոտ 30%-ով ագրարային հատվածի համախառն բերքի պակասեցման, իսկ 2011 թ. կարկտահարությունն ընդգրկեց հանրապետության գրեթե բոլոր մարզերը, որտեղ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններին և խաղողի ու պտղահատապտղային տնկարկներին հասցված վնասը, պաշտոնական հաշվարկներով, գնահատվել է 16-20 մլրդ դրամ⁷:

ՀՀ-ում, որտեղ ըստ եղանակային պայմանների անբարենպաստ տարիները կրկնվում են միջին հաշվով 7-8 տարին մեկ, 1991 թվականից մինչև օրս չեն ապահովագրվել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, խաղողի ու պտղահատապտղային տնկարկների տարածքը և գյուղատնտեսական կենդանիներն ու զույթը:

ՀՀ ագրարային հատվածի կայուն զարգացման ռազմավարությամբ նախանշված խնդիրների և դրանց լուծման քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում, փաստորեն, ներառված չէ ոլորտի ձեռնարկատիրական գործունեության ռիսկերի ապահովագրական համակարգի ներդրումը: Դրա գլխավոր պատճառն այն է, որ ՀՀ-ում դեռևս չեն իրականացվել ագրարային հատվածի ձեռնարկատիրական գործունեության ռիսկերի գնահատման աշխատանքները, որն էլ ապահովագրական համակարգի ներդրմանը խոչընդոտող գործոններից մեկն է:

Թեև դեռևս 2004 թ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացրած բյուջետային հայտում հիմնավորվել է 870 գյուղական համայնքներում բնական գործոններով պայմանավորված ռիսկերի գնահատում իրականացնելու անհրաժեշտությունը, բայց այդ աշխատանքներն առ այսօր չեն կատարվել, ինչը սահմանափակում է հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների գործունեությունը:

Մի քանի ապահովագրական ընկերություններում մեր կատարած հարցումների արդյունքներից պարզվեց, որ հիմնական պատճառը պահանջարկի բացակայությունն է: Այսպես՝ «ՌԵՍՈ», «Կասկադ ինշուրանս» և «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերություններն ընդհանրապես չեն իրականացնում գյուղատնտեսական ապահովագրություն (բացառությամբ՝ գյուղատնտեսական տեխնիկայից): Կարծում ենք՝ ագրարային հատվածում ապահովագրության համակարգ ներդնելու համար, որպեսզի ընկերությունները շահագրգիռ լինեն աշխատելու, իսկ գյուղացիական տնտեսությունների համար էլ թանկ չարժենա, ոլորտի բեռի մեծ մասը պետությունը պետք է վերցնի իր վրա, իսկ մնացած մասն էլ՝ մասնավոր ապահովագրական ընկերությունները: Այսպես օրինակ՝ զարգացած երկրներում գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրման շուկան գնահատվում է 8.38 մլն դոլար ապահովավճարումներով, որից 5.272 մլն-ը կամ 62.9%-ը ծախսվում են ԱՄՆ-ում, իսկ 99 մլն-ը կամ 11.87%-ը՝ Կանադայում⁸:

Կարծում ենք՝ ցամաքային կլիմա ունեցող մեր սակավահող հանրապետության ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների առկայության պայմաններում տեխնաժին գործոնի նկատմամբ դյուրագագ ագրարային հատվածի կայուն զարգացման և գոտիական մասնագիտացման համար անընդունելի է գյուղատնտեսական ապահովագրության համակարգի բացակայությունը: Ուստի,

⁷ Ըստ ՀՀ ԱԿԾ գյուղատնտեսության բաժնի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության և գյուղի սոցիալական զարգացման ծրագրավորման վարչության տվյալների:

⁸ Steu T ácf ð i eðf af af ðuf eð ðaðaðf áaf ey e i áðáñððaðf áaf ey náeuñeí of çyénðáaf i úo ðeñeí á, <http://forinsurer.com/pollci/06/11/10/2702>:

մեր հանրապետության ագրարային հատվածի մասնագիտացման խորացման գործընթացին սպառնացող ռիսկերի նվազեցման և հետևանքների հաղթահարման համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները. աջակցություն ճյուղում փոխադարձ ապահովագրության համակարգի ներդրմանը, հակակարկտային համակարգի վերականգնման փորձնական ծրագրերի իրականացում, ջրախնայողական ու փակ տեխնոլոգիաների ներդրում, երաշտի ու սակավաջրության պայմաններում ոռոգման ջրի օգտագործման կանոնակարգում, հեղեղատների ու սողանքների վերացման միջոցառումների իրականացում և այլն:

Տեխնոլոգիական ռիսկերն առաջացել են տնտեսապես զարգացած երկրներից ագրարային հատվածի հայրենական արտադրական բազայի տեխնիկատեխնոլոգիական զարգացման մակարդակում հետ մնալու պատճառով: Հետքարտեփոխումների տարիներին անհաղթահարելի է մնում գյուղացիական տնտեսությունների կողմից նոր տեխնիկայի ձեռքբերման նվազման միտումը, իսկ դրա հիմնական տեսակների ֆիզիկական մաշվածքը հասնում է 75%-ի: Այսպես՝ 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ տրակտորների սարքինության մակարդակը կազմել է 77,8%, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայններինը, համապատասխանաբար՝ 78,0 և 71,0%⁹: Ընդ որում, հայրենական գյուղատնտեսական մեքենաշինությունը, փաստորեն, գտնվում է գրոյական մակարդակում: Այդպիսի վիճակի պատճառներից մեկը ագրարային հատվածի ճյուղերի ցածր եկամտաբերությունն է:

Զնախատեսված իրավիճակ է ձևավորվել նաև ՀՀ ագրարային հատվածում հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառման առումով: Դրանց օգտագործումը գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և խաղողի ու պտղահատապտղային տնկարկների տարածքի մեկ հեկտարի հաշվով կազմում է ընդամենը 7,36 կգ, որը գրեթե հինգ կարգով պակաս է ԵՄ երկրներում օգտագործման քանակությունից և համեմատելի է զարգացող երկրների խմբին պատկանող որոշ պետությունների ցուցանիշների հետ: Միաժամանակ, հայրենական հանքային պարարտանյութերի արտադրության բացակայությունն ու արտերկրից ձեռք բերվածի ավելի բարձր գներով վաճառքը, գյուղական վայրերում լավագույն օրգանական պարարտանյութ համարվող փոռոցի գոմաղբի՝ որպես վառելիքի օգտագործումը հանգեցնում են հողերի վատթարացմանը, անբարենպաստ եղանակային պայմաններում նվազեցնում են բուսաբուծության եկամտաբերությունն ու վարման կայունությունը, ուստի մեծ ուժով են դրսևորվում ագրոբնապահպանական ռիսկերը:

Ագրոբնապահպանական ռիսկերն առավելապես պայմանավորված են անբարենպաստ կլիմայական փոփոխություններով, ինչպես նաև բնական ու տեխնածին արտակարգ իրավիճակների հետևանքներով: Ագրարային հատվածի մասնագիտացման ժամանակակից փուլում դրանք հիմնականում առաջացել են գյուղատնտեսական հողատեսքերի որակական վիճակի վատթարացմամբ և գրեթե 175 հազ. հա-ի հասած չօգտագործվող վարելահողերի զգալի չափերով պայմանավորված: Ընդ որում, առավել մեծ վտանգ են ներկայացնում բարելավման կարիք ունեցող գյուղատնտեսական հողատեսքերը: Հողատարման տեսակետից վտանգավոր գյուղատնտեսական նշանա-

⁹ Տե՛ս Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ, Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Եր., 2012, էջ 4,5,6:

կուրսյան հողերին բաժին է ընկնում դրանց ընդհանուր տարածքի 12,6%-ը, այդ թվում. վարելահողերի՝ 23,7%-ը, արոտավայրերի՝ 11,6%-ը, իսկ երկրորդային աղակալված են համապատասխանաբար՝ 1,3; 5,5 և 0,9%-ը: Քարքարոտ և թափոններով աղտոտված են գյուղատնտեսական նշանակության հողերի 72,8%-ը, վարելահողերի՝ 47,1%-ը, խոտհարքների՝ 73,9%-ը և արոտավայրերի՝ 80,0%-ը¹⁰:

Հունուսի բացասական հաշվեկշիռ ունեցող հողերի տեսակարար կշիռը գերազանցում է 40%-ը, իսկ մոտ 100 հազ. հա վարելահող բնութագրվում է դրանց ցածր պարունակությամբ:

Արարատյան դաշտի հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողերի ընդհանուր տարածությունը կազմում է շուրջ 29 հազ. հա: Ջրալույծ աղերի պարունակությունը շատ մեծ է (1-3%), որոնց կազմում զգալի տեղ է գրավում դրանց բարելավումը դժվարացնող սոդան: PH-ը տատանվում է 9-11-ի սահմաններում, իսկ կլանված նատրիումի պարունակությունը 20-30 մգ-էկվ է 100 գ հողում¹¹:

ՀՀ-ում հաշվառված են ավելի քան 1400 մշտական և ժամանակավոր՝ գետերի հուններում գործող սելավատարներ, որոնք այս կամ այն չափով համարվում են սելավաբեր, և դրանց պատճառած տարեկան միջին վնասները, ըստ ՀՀ փրկարար ծառայության տվյալների, կազմում են 1,6-1,7 մլրդ դրամ:

Առանձնահատուկ վտանգ է ներկայացնում հողերի անապատացումը: Այս կամ այն չափով այդ գործընթացն ընդգրկում է հանրապետության ընդհանուր տարածքի շուրջ 80%-ից ավելին, իսկ խիստ անապատացված է շուրջ 26,6%-ը¹²:

Վատթարացել է նաև բարելավված հողերի վիճակը: 1988-ին ցանքաշրջանառության մեջ գտնվող մոտ 299,9 հազ. հա բարելավված հողերից վերջին տարիների ընթացքում հողերի պահպանության և վերականգնման ագրոբնապահպանական միջոցառումների անտեսման հետևանքով մոտ 104,2 հազ. հա-ն բարելավման կարիք ունեն, իսկ մնացած հողերն օգտագործվում են անբավարար արդյունավետությամբ¹³:

Քննարկվող ժամանակաշրջանում աճել են նաև անջրդի հողատարածքները՝ հասնելով մինչև 325,5 հազ. հա-ի, որը պատճառ է դարձել ոչ միայն գյուղատնտեսական մշակաբույսերի, պտուղ-հատապտուղների և խաղողի բերքի էական թերահավաքման, այլև հողերի վատթարացման ու անապատացման գործընթացների զարգացման¹⁴:

¹⁰ Տե՛ս Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Եր., էջ 12:

¹¹ Տե՛ս **Կ. Մելիքյան** և ուրիշներ, Գյուղատնտեսական նշանակության հողերի էկոլոգիական արդի վիճակը, հողօգտագործման մակարդակը, կառավարման համակարգի կատարելագործումը և արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2004, էջ 35:

¹² Տե՛ս **Ա. Խոյեցյան, Ռ. Սկրտչյան**, Անապատացման պատճառահետևանքային կապերը և տարածաժամանակային զնահատման սկզբունքները ՀՀ-ում, Եր., 2002, էջ 175:

¹³ Народное хозяйство Арм. ССР в 1988 году. Стат. ежегодник (Госкомстат Арм. ССР), Եր., „Айастан“, 1988, էջ 197: ՀՀ Կառավարության 2011 թ. հոկտեմբերի 13-ի № 1450-Ն «ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2011 թ. հաշվետվության (հողային հաշվեկշիռ) մասին» որոշումը:

¹⁴ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР в 1988 году. Стат. ежегодник (Госкомстат Арм. ССР), Եր., „Айастан“, 1989, էջ 197: Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Եր., 2011, էջ 12, 13:

Գյուղատնտեսական նշանակության հողերի այդպիսի անբարենպաստ վիճակի պատճառներից են հողերի բերրիության բարձրացման գործում պետական միջոցառումների անբավարար ֆինանսավորումը, գյուղատնտեսական հողատեսքերի և շրջակա միջավայրի վերականգնման ու պահպանության գործընթացների անտեսումը: Ուստի, հողերի բերրիության բարելավումը, հողային հարաբերությունների կարգավորումն ու կատարելագործումը, գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման սկզբունքի պահպանումը հանրապետության ագրարային քաղաքականության հիմնական խնդիրներից են համարվում:

Ագրոբնապահպանական ռիսկերի կախման տեսակետից կարևոր է նաև ՀՀ գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը կլիմայական փոփոխություններին հարմարեցնելու համար երկրագործության տարածասահմանը (արեալը) նախալեռնային ու լեռնային գոտիների և խոնավության բավականաչափ ներուժ ունեցող հյուսիսային ու հյուսիսարևելյան շրջանների ուղղությամբ տեղաշարժելը: Դրանցում երկրագործության տարածասահմանի ընդարձակումը պետք է զուգակցվի հողաբարելավման, ըստ չափաքանակների օրգանական ու հանքային պարարտանյութերի և մշակաբույսերի պաշտպանության, քիմիական միջոցների կիրառման հետ, որոնք գործածվում են համանման ագրոկլիմայական պայմաններ ունեցող զարգացած երկրներում:

Կլիմայի ցամաքայնության աճի պատճառով վերոնշյալ տարածաշրջաններում առաջնահերթ միջոցառումներ են համարվում ջրախնայող տեխնոլոգիաների ներդրումը, ներառյալ՝ հողատարածքների պահպանումը կամ ընդարձակումը, աշնանացան հացահատիկային մշակաբույսերի մասնաբաժնի ավելացումը, երաշտադիմացկուն մշակաբույսերի (եգիպտացորեն, սորգո, կորեկ և այլն) ցանքատարածությունների ընդարձակումը: Ըստ տարիների՝ խոնավության բարենպաստության լրացուցիչ ջերմային ռեսուրսները օգտագործելու համար առաջարկվում է ընդարձակել երկրորդային խոզանաբույս մշակաբույսերի ցանքատարածությունները: Հանրապետության ագրարային հատվածի մասնագիտացման հարմարեցման միջոցառումները, կապված ագրոկլիմայական պայմանների սպասվելիք փոփոխությունների հետ, պետք է ուղղված լինեն գարնանացան մշակաբույսերի համեմատությամբ ավելի բերքատու աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդարձակմանը: Լրացուցիչ ջերմային ռեսուրսները օգտագործելու նպատակով պահանջվում է վերանայել աճեցվող գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակային (սորտային) կազմը՝ ավելի ուշահաս և արդյունավետ տեսակների ընտրության համար: Առաջարկվում է այդպիսի տարածաշրջաններում զգալիորեն մեծացնել ջերմասեր գյուղատնտեսական մշակաբույսերի (եգիպտացորեն, շաքարի ձակնդեղ և այլն) ցանքատարածությունները, որոնք այժմ զգալի ծավալներով ներմուծվում են: Դա ոչ միայն կնվազեցնի ձեռնարկատիրական գործունեության ռիսկերը, այլև կմեղմացնի կախվածությունը ներմուծումից: Սա վերաբերում է նաև յուղատու տեխնիկական մշակաբույսերի (արևածաղիկ, սոյա, աշնանացան հլածուկ, գանգրավուշ) ցանքատարածությունների ընդարձակման հեռանկարին:

Կապված երաշտի հաճախականության հետ՝ պարենային և կերային հացահատիկի արտադրությամբ մասնագիտացված Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի և Սյունիքի մարզերը բերքի թերհավաքումը փոխհատուցելու

նպատակով պետք է ունենան ցանքատարածությունների ընդարձակման հնարավորություններ: Այդ հողատարածությունները կարելի է ազատել՝ կերային հացահատիկի արտադրության համապատասխան ծավալները տեղափոխելով ռիսկային երկրագործության գոտու սահմաններից դուրս: Ցամաքային կլիմա ունեցող տարածաշրջաններում հացահատիկի համախառն բերքի միջտարեկան փոփոխականությունը պակասեցնելու նպատակով անհրաժեշտ են որոշակի միջոցառումներ, օրինակ՝ հացահատիկային տարբեր մշակաբույսերի ցանքաշրջանառության օգտագործումը: Բացի դրանից, հարկ է ստեղծել հացահատիկի զգալի ապահովագրական պաշարներ (շուրջ 280-300 հազ. տ), որի համար պահանջվում են պահուստային հզորության շտեմարաններ, ինչպես նաև լրացուցիչ բերքահավաքի տեխնիկա:

Պետք է մեծացնել տնտեսապես արդյունավետ ջրովի երկրագործության ծավալները հատկապես ցածրադիր գոտու և գետահովտային տարածաշրջանների առանձին տեղամասերում՝ հաշվի առնելով, որ կլիմայի տաքացումը բարձրացնում է դրա արդյունավետության մակարդակը: Նշված տարածքների առանձին տեղամասերում նպատակահարմար է ստեղծել էկոլոգիապես մաքուր, բարձրարժեք ու շուկայական մեծ պահանջարկ ունեցող խաղողի, կորիզավոր և չոր մերձարևադարձային պտուղների արտադրության ընդարձակ տարածասահմաններ:

Սոցիալական ռիսկերը զգալի չափով պայմանավորված են հանրապետության տնտեսության բոլոր ոլորտների շարքում ագրարային հատվածում ամենացածր աշխատավարձի պատճառով դրակյալ կադրերի պակասով, քաղաքների և ցածրադիր գոտու համեմատությամբ գյուղերի ու լեռնային գոտու սոցիալական ենթակառուցվածքների աճող հետամնացությամբ, ինչպես նաև գյուղատնտեսական աշխատանքների վարկանիշի անկմամբ: Օրինակ՝ ագրարային հատվածում զբաղվածների միջին ամսական աշխատավարձը 1,4 անգամ ավելի ցածր է, քան ամբողջ տնտեսության միջին ամսականը, և չի գերազանցում 73,7 հազ. դրամի սահմանը¹⁵: Չնայած պաշտոնապես հռչակված՝ գյուղի սոցիալական խնդիրների լուծման գերակայությանը, հատկապես 2011 թ. ամենաշատը կրճատվել է պետական ծրագրերի սոցիալական մասը. դրա ֆինանսավորումը պակասել է 50%-ով: Տնտեսապես ակտիվ տարիքում ավելացել է գյուղական բնակչության գործազրկությունը. մակարդակը գերազանցել է վտանգավոր ցուցանիշը՝ հասնելով 36,3%-ի (2007 թ.՝ 30,6%)¹⁶: Ագրարային հատվածի եկամտաբերության նվազումը թույլ չտվեց կրճատել գյուղատնտեսության մեջ զբաղվածների և տնտեսության այլ ոլորտների աշխատողների եկամուտների միջև տարբերությունը, կասեցնել գյուղատնտեսական աշխատանքների վարկանիշի անկումը, մեծացնել ճյուղի աշխատանքային ռեսուրսների որակական ու քանակական ներուժը, մեղմացնել բնակչության մեկ շնչի հաշվով պարենային ռեսուրսների ու սննդամթերքի սպառման մակարդակների բևեռացումը: Հատկապես ծանր իրավիճակ է ստեղծվել Տավուշի և Լոռու մարզերի անկումային տարածաշրջանների գյուղական համայնքներում, գյուղական բնակչության կտրուկ նվազմամբ առանձնացող Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում, ավելցուկ աշխատուժով աչքի ընկնող Արարատյան դաշտում, ինչպես նաև բարձրլեռնային գոտու մարզերում և դրանց հավասարեցված սահմանամերձ շրջանների

¹⁵ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք -2011, ՀՀ ԱԿԾ, Եր., 2011, էջ 90:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 68:

գյուղական բնակավայրերում: Ինտենսիվ և շուկայական մրցունակ ագրարային հատվածի՝ որպես նորաստեղծական զարգացման ու ներդրումային մոդելների գործառնության կենտրոնների վարման համար բավականաչափ չի խթանվում բարենպաստ ագրոկլիմայական պայմաններ ունեցող ցածրադիր ու նախալեռնային գոտիների գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման հետագա խորացումը:

Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների մեծ մասի տնտեսավարման մեջ առկա են էական տարբերություններ, որոնք կարող են արտահայտվել մասնագիտացման առանձնահատուկ պայմաններով, ապրանքային արտադրանքի մակարդակում, չափերում և այլն: Դրանք, իրենց հերթին, պայմանավորում են պետական ազդեցության մեխանիզմներում այդ հատվածի նկատմամբ տարբերակումը և առանձնահատուկ գործիքների կիրառումը ներուժն օգտագործելիս: Հիմնական ազգային փոքրամասնությունների բնակության նախասկզբնական միջավայր համարվող տարածաշրջանների էթնիկական մասնագիտացման տեխնոլոգիական արդիականացման ծրագրերի մշակումը և իրագործումը կհանգեցնեն նրանց ավանդական ապրելակերպի ապահովման համար անհրաժեշտ, այսպես կոչված, «ռիսարի ու ձիու արոտավայրերի» և առկա կենսաբանական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Ուստի ազգային փոքրամասնությունների գյուղացիական տնտեսությունների ավանդական մասնագիտացումն անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես առանձին տարածաշրջանների ագրարային քաղաքականության ձևավորման, այնպես էլ բնակության ցրված տարածքի համար հատուկ ծրագրերի և նախագծերի մշակման դեպքում:

Գյուղատնտեսական մթերքի, հումքի ու պարենի արտադրության և իրացման ոլորտում անհրաժեշտ են միջոցառումներ, որոնց իրականացման համար պահանջվում են կազմակերպատնտեսական ձեռնարկումներ՝ ուղղված.

- ներձյուղային ու միջձյուղային տնտեսական հարաբերությունների բարելավմանը, որոնք կարող են նպաստել ագրարային հատվածի մասնագիտացման խորացմանը և ընդլայնված վերարտադրության տեմպերի աճին, ներդրումների ներգրավմանը և նորաստեղծության արմատավորմանը,
- զների կայունացմանը և տնտեսական լծակների օգնությամբ գյուղատնտեսական հիմնական մթերքների սահմանային զների հիման վրա գնագոյացման մեխանիզմների ձևավորմանը,
- գյուղատնտեսական մթերքների արտադրության գործում մասնագիտացված ապրանքարտադրողների մեծամասնության համար կարճաժամկետ և հատկապես ներդրումային վարկերի մատչելիության ապահովման նպատակով համապատասխան համակարգերի կատարելագործմանը,
- ՀՀ մարզերում և տարածաշրջաններում, գյուղատնտեսական մասնագիտացման խորացմանը զուգընթաց, առաջընթաց տնտեսական աճի գոտիների ներուժն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծմանը. այդ գործոնը հաշվի առնել նաև տարածքների համաչափ զարգացման և տարաբնակեցման հեռանկարային համակարգեր ձևավորելիս,

- գյուղատնտեսական մթերքի, հումքի ու պարենի արտադրության, վերամշակման և իրացման ոլորտում մասնագիտացված տարածաշրջանների միասնացման և սպառողական կոոպերացիայի զարգացման խթանմանը,
- ազգային փոքրամասնությունների ռեսուրսատնտեսում ապահովող ավանդականորեն մասնագիտացված ենթաճյուղերում տեխնոլոգիական արդիականացման ծրագրերի մշակմանն ու իրագործմանը և նոր տեխնոլոգիաների յուրացմանը,
- ընդհանուր ագրոպարենային շուկայի և ԵվրԱզԵս-ի, իսկ հետագայում դրա հիմքի վրա ստեղծվելիք մաքսային միության շրջանակներում միասնական ապրանքաբաշխիչ ցանցերի ձևավորմանը ՀՀ լիարժեք մասնակցությամբ:

Արտաքին առևտրային ռիսկերը, հարուցված շուկայական մրցակցության տատանումներով և գյուղատնտեսական մթերքներ, հումք ու պարեն արտահանող տնտեսապես զարգացած երկրներում կիրառվող պետական աջակցության միջոցառումներով, խորացնում են խոշոր առևտրային ցանցերի կողմից հայրենական ագրոպարենային շուկայի մենաշնորհացումը: Որպես սրա հետևանք կարելի է նշել գյուղատնտեսական ապրանքարտադրողների համար շուկայական ենթակառուցվածքների ցածր աստիճանի մատչելիությունն ու ներքին շուկաների վրա ներմուծվող մթերքների հնարավոր ճնշման ավելացումը՝ ԱՀԿ-ին անդամակցությամբ պայմանավորված:

Այդ պայմաններում նվազում է հայրենական գյուղատնտեսության բնագավառի ապրանքարտադրողների տնտեսական շահագրգռվածությունը գյուղմթերքների արտադրության ավելացման առումով, հատկապես երբ դա ցածր եկամտաբեր կամ էլ վնասաբեր է: Օրինակ՝ կարտոֆիլի ցածր եկամտաբերությունը դարձավ դրա ցանքատարածությունների և համախառն բերքի կրճատման հիմնական պատճառը (2008 թ. համեմատությամբ 2010-ին ցանքատարածությունները կրճատվեցին 5936 հեկտարով կամ 17.2%-ով, իսկ համախառն բերքը՝ 166,6 հազ. տ-ով կամ 25,7%-ով)¹⁷: Փաստորեն, վնասը կազմում է 20,0 մլն դրամ: Հանրապետության կարտոֆիլագործական մասնագիտացված տարածաշրջանների մեծ մասում, առանց բյուջետային լրահատկացումների, ենթաճյուղը կարող է ապահովել ցածր եկամտաբերություն կամ էլ աշխատել վնասով:

Ուստի կարտոֆիլի արտադրությանն առնչվող՝ հանրապետությունում ստեղծված իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ է մշակել և ընդունել ենթաճյուղի վերականգնման երկարաժամկետ նպատակային ծրագիր՝ ագրարային հատվածի ապրանքային արտադրանքի մասնաբաժնում կարտոֆիլի արտադրությունն ավելացնելու նպատակով նախատեսելով անմիջական պետական աջակցություն: Հարկ է նաև խթանել մթերման և ենթաճյուղը նյութատեխնիկական միջոցներով ապահովելու գործում սպառողական կոոպերացիայի զարգացումը, իրականացնել ձկուն մաքսահարկային քաղաքականություն կարտոֆիլի տարածաշրջանային շուկայում ներմուծման փոխարինման և մրցակցություն ձևավորող հնարավորություններն ավելի գործնականորեն օգտագործելու համար:

«ՀՀ գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարությունը» ծրագրում նախատեսված է վերանայել ներճյուղային ու գո-

¹⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2011, ՀՀ ԱՎԾ, Եր., 2011, էջ 302, 304:

տիական մասնագիտացումը՝ հաշվի առնելով կուտակված փորձը, տնտեսավարման ավանդույթները, պետական բյուջեի հնարավորությունները և երկրի պարենային անվտանգության նվաճումները: Դրա համար անհրաժեշտ է.

- բյուջետային միջոցները և ուշադրությունը կենտրոնացնել այգեգործության, բանջարաբուծության, կարտոֆիլագործության, կաթնամսատու տավարաբուծության, մսակաթնաբրդատու ոչխարաբուծության, լեռնաանտառային խոզաբուծության, ալպիական մեղվաբուծության և լեռնային գոտու տարածաշրջանների մասնագիտացման հետագա խորացման վրա,
- բարելավել պետական աջակցության պայմանները և վերացնել ինքնաֆինանսավորման սկզբունքը, որի համար պետք է մեծացնել ծրագրերի իրագործմանը տրամադրվող գիտական աջակցությունը՝ նպատակ ունենալով մարզային և համայնքային մակարդակներում ստեղծել մասնագիտացման հետագա խորացում ապահովող արդյունավետ համակարգեր,
- մշակել կազմակերպչական և տնտեսական միջոցառումների համակարգ՝ ուղղված հայրենական գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, խթանելով երկրի պարենային անվտանգության մակարդակի աճը և պարենամթերքի արտադրության ծավալների ավելացումը, ագրոպարենային շուկայի և դրա մասնակազմությունների զարգացած ենթակառուցվածքների ձևավորումը՝ արտադրողից մինչև վերջնական սպառող արդյունավետ և քիչ ծախսատար ապրանքաշրջանառություն կազմակերպելու համար,
- ինտերվենցիայի և գրավի մեխանիզմների հիման վրա ձեռք բերվող գյուղատնտեսական մթերքի տեսականու ընդլայնումը, ինչպես նաև խաղողի, պտուղների, կաթի և այլ մթերքների ձեռքբերման ծավալների բաժնորոշման արմատավորումը՝ հաշվի առնելով այդ նպատակների համար նախատեսված պետական բյուջետային միջոցների սահմանը,
- կոոպերացիայի բոլոր ձևերի զարգացման խթանումը, հատկապես՝ սպառողական, որպեսզի մթերքի իրացման ոլորտում բացառվի ավելորդ միջնորդների գործունեությունը, մեծանա գյուղատնտեսական ապրանք արտադրողների դերը,
- մշակել իրավական չափորոշիչ փաստաթղթեր՝ ուղղված գյուղատնտեսական ապրանքարտադրողների արտադրանքի իրացման համակարգերի ու պայմանների և գյուղատնտեսական մթերքի, հումքի ու պարենի շուկաների գործառնության կանոնակարգմանը, ինչպես նաև վարել ձկուն մաքսահարկացուցակային քաղաքականություն,
- ընդունել որոշումներ տրանսպորտային փոխադրումների (առաջին հերթին՝ ավտոմոբիլային), գյուղատնտեսական մթերքի, հումքի և պարենի սակագների չափերի մասին,
- երկրի պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից՝ քննարկել ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության պայմաններին վերաբերող հարցերը՝ միասնական մաքսային միության ձևավորման հաշվառմամբ:

Քաղաքական ռիսկերը հնարավոր են՝ կապված ինչպես հայրենական ագրարային շուկայի հետագա ազատականացման ու ներմուծվող մթերքների

ներթափանցման ավելացման (2010 և 2011 թթ., համապատասխանաբար՝ 593.7 և 636.3 հազ. տոննա), պահանջարկի գծով ՀՀ քաղաքականության վրա արտասահմանյան պետությունների հնարավոր ճնշման հետ (աղյուսակ 2), այնպես էլ ներմուծման որոշակի սահմանափակման և ներմուծվող պարենամթերքի գների բարձրացման առնչությամբ: Դա կարող է ներքին ագրոպարենային շուկայի հաշվեկշռվածության խախտման պատճառ դառնալ հատկապես պարենամթերքի այն մասնակազմությունների առումով, որոնց բնորոշ է ներմուծման մատակարարումների բարձր տեսակարար կշիռը:

Աղյուսակ 2

Պարենային ապրանքների և գյուղատնտեսական հումքի հիմնական տեսակների ներմուծումը ՀՀ-ում¹⁸

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011
Հացահատիկ և հացամթերք	455239,0	337717,1	393435,6	361510,4	382871,9
Շաքար	87846,9	102263,0	64822,4	97752,7	916668,4
Բուսական յուղ	22885,2	22643,7	22416,0	23223,9	23763,1
Ձու	111,0	88,5	15,4	259,1	1983,2
Տավարի և խոզի միս	8652,2	22909,4	15952,9	10686,9	15197,2
Թռչնի միս	26480,8	38284,7	28144,6	36434,2	38971,0
Կաթի բոլոր տեսակները և կարագ	7217,0	8075,3	5950,5	6694,6	8067,4
Պանիր	877,3	760,0	569,1	725,8	1035,3
Բանջարեղեն և կարտոֆիլ	19721,6	17267,9	14651,3	20959,4	28854,0
Միրգ, ներառյալ՝ ընկուզապտուղներ և խաղող	30353,9	27125,9	24641,1	32081,0	33600,2
Բոստանային մշակաբույսեր	460,1	554,0	142,1	449,1	434,1

Թվարկված ռիսկերը ձևավորում են պարենային անվտանգության սպառնալիքներ, որոնք կարող են հանգեցնել լուրջ հետևանքների: Պարենային անվտանգության ապահովումը համարվում է ՀՀ ազգային անվտանգության գերակա խնդիրներից մեկը, քանի որ, առանց հուսալի պարենային մատակարարման, հնարավոր չէ երաշխավորել ազգաբնակչության անվտանգությունը: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ հանրապետությունը սեփական արտադրության հաշվին չի կարողանում ազգաբնակչությանը լիարժեք ապահովել սննդամթերքով՝ շարունակաբար պակասը լրացնելով նույնիսկ այնպիսի մթերքների խոշորածավալ ներմուծմամբ, որոնք բավականաչափ քանակությամբ կարող է արտադրել ոչ միայն ներքին սպառման, այլև տարածաշրջանային և համաշխարհային ագրոպարենային շուկա արտահանելու համար:

Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման անկայուն մակարդակը և ցածր եկամտաբերությունը, ագրոպարենային շուկայի և պարենամթերքի մասնակազմությունների գործառնության մեխանիզմների կազմակերպատնտեսական անկատարությունը, ագրարային հատվածի և գյուղի սոցիալական ոլորտների ներդրումային վատթարացումը մեծապես կապված են պետական աջակցություն տրամադրելու պայմանների և գյուղատնտեսա-

¹⁸ Տե՛ս Պարենային ապահովվածություն և աղքատություն, 2011 թ. հունվար-դեկտեմբեր, Կիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱԿԾ, Եր., 2012, էջ 65:

կան մթերքի, հումքի ու պարենի շուկաների գործառույթների մասնակի փոփոխությունների հետ:

Բազմաթիվ գյուղացիական տնտեսություններ, ունենալով պետական աջակցություն ստանալու իրավունք, չեն կարողանում օգտվել այդ հնարավորությունից բյուջետային միջոցների անբավարարության պատճառով: Հաճախ գյուղացիական տնտեսություններն ընթացիկ տարվա պետական աջակցության մասին տեղեկանում են այն ժամանակ, երբ արդեն հիմնականում մշակված են լինում արտադրական բնույթի լուծումները:

Այս դեպքում եկամտի մի զգալի մասի կորստի վտանգ է առաջանում, որը կարելի է դիտարկել, օրինակ՝ 2011 թ. ՀՀ-ում խաղողի արտադրության և մթերման օրինակով.

Աղյուսակ 3

Խաղողի արտադրության և իրացման տնտեսական ցուցանիշները ՀՀ-ում¹⁹

Ցուցանիշներ	2010 թ.	2011 թ.	2011 թ.՝ 2010 թ. համեմ., %
Խաղողի համախառն բերքը, հազ. տ	222,9	229,6	103,0
Խաղողի միջին բերքատվությունը, ց/հա	151,5	153,7	101,4
Իրացված խաղողը, հազ. տ	199,9	205,4	102,7
Խաղողի արտահանումը, հազ. տ	6,3	7,5	119,0
Խաղողի արտադրության ծավալում արտահանման տեսակարար կշիռը, %	2,8	3,2	114,3
Խաղողի ապրանքայնության մակարդակը, %	89,7	92,5	103,1
1 ց խաղողի ինքնարժեքը, հազ. տ	29,2	35,5	88,3
1 ց խաղողի միջին մանրածախ գինը, հազ. տ	58,5	69,8	119,3
1 ց խաղողի շահույթը, հազ. տ	26,6	34,3	165,4
Շահութաբերության մակարդակը, %	91,1	96,6	106,0

Այսպես՝ 2011 թ., 2010 թ. համեմատությամբ, 6,7 հազ. տոննայով կամ 3,0%-ով խաղողի արտադրության ավելացումը, 16,2%-ով իրացման գների աճի դեպքում, նպաստեց շահութաբերության մակարդակի բարձրացմանը և շահույթի ավելացմանը: Ընդ որում, 2011 թ., նախորդ տարվա համեմատությամբ, խաղողի արտահանումը ավելացել է 1,2 անգամ:

Չնայած դրան, խաղողագործության տնտեսական արդյունավետության ցուցանիշները դեռևս հեռու են բավարար համարվելուց: Հայկական խաղողագործությունն աշխարհում ճանաչելի ապրանքանիշ՝ բրենդ դարձնելու համար կարևորվում է երեք բաղադրիչ՝ որակյալ խաղողի տեխնիկական սորտերի աճեցումը, գինու-կոնյակի արտադրությունը և արտահանման ու վաճառքի ճիշտ կազմակերպումը:

ՀՀ ագրարային հատվածին հատուկ շատ ռիսկեր հնարավոր է հաղթահարել գյուղատնտեսական ապրանքարտադրողների և պետության սերտ համագործակցությամբ, գյուղատնտեսական արտադրության մեջ ներդրումների, նորաստեղծական զարգացման արմատավորման, բոլոր ենթաճյուղերի արդիականացման և տնտեսավարման կազմակերպատնտեսական մեխանիզմի կատարելագործման միջոցով:

¹⁹ Տե՛ս Պարենային ապահովվածություն և աղքատություն, 2011 թ. հունվար-դեկտեմբեր, Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱԿԾ, Եր., 2012, էջ 27, 45, 68:

ՀՀ-ն գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացման առումով բարձր ռիսկայնության երկիր է համարվում: Կարծում ենք՝ քանի դեռ գոյություն ունի շուկայական տնտեսությունը, գոյություն կունենան նաև տարաբնույթ ռիսկեր: Մեր համոզմամբ՝ մոտ հեռանկարում ագրարային հատվածի զարգացման պետական ծրագրեր մշակելիս հարկ է հաշվի առնել դրանց իրականացման կարգը, վերանայել ոլորտի ներձյուղային կառուցվածքն ու մասնագիտացման խորացման մեխանիզմները, պետական բյուջեի հնարավորությունները՝ ապահովելով հանրապետության պարենային անվտանգությունը:

ВЛАДИМИР МАНАСЯН

Ассистент кафедры „ Природопользования” АГЭУ,
кандидат географических наук

Риски и возможности их преодоления в процессе специализации сельскохозяйственного производства в РА.– Проведен анализ проблем эффективного управления рисками в процессе углубления специализации сельскохозяйственного производства и внедрения системы сельскохозяйственного страхования в РА. На основе оценки основных видов риска, обусловленных макроэкономическими, природными, технологическими, агроэкологическими, социальными, внешнеторговыми и политическими факторами, представлены пути усовершенствования отраслевой структуры аграрного сектора, формирования рыночно-институциональных структур, проведения мероприятий по преодолению „уязвимости” специализаций и снижения затрат.

Ориентированный на дальнейшее усовершенствование специализации сельскохозяйственного производства в РА и государственного регулирования в сфере управления рисками и страхованием, разработаны основные направления государственной политики.

VLADIMIR MANASYAN

Assistant at the Chair of
„Environmental Economics” at ASUE,
PhD in Geographical Sciences

Risks and Opportunities to Overcome Them in the Process of Specialization of Agricultural Production.– The analysis of the problems of effective risk management in the process of deepening the specialization of agricultural production and the introduction of agricultural insurance system in the Republic of Armenia were considered. Based on the assessment of major risks due to macro-economic, natural, technological, and political factors, the ways of improving the industrial structure of the agricultural sector, the formation of market-institutional structures, conducting activities to address the “vulnerability” of specialization and costs reduction are pointed out.

The main directions of the state policy are developed, focused on further improvement of the specialization of agricultural production of the RA and state regulation in the area of risk management and insurance.

